ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ՀԱՅԿԱՇԵՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Հայկաշեն համայնք,
ՀՀ Արմավիրի մարզ, գ.Հայկաշեն, Հեռ. (077) 863222 ,
haykashen.armavir@mta.gov.am

N 65
24 նոյեմբեր 2016թ.

ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶՊԵՏԱՐԱՆ
ՄԱՐԶՊԵՏ
ԱՇՈՏ ՂԱՀՐԱՄԱՆՅԱՆԻՆ

ՄԵԾԱՐԳՈ ՄԱՐԶՊԵՏ

Կից Ձեզ է ներկայացվում Արմավիրի մարզի Հայկաշեն համայնքի ավագանու 2016 թվականի նոյեմբերի 23-ի արտահերթ նիստի որոշումները:

Առդիր 11 թերթ:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՎԱՐՇԱՄ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ

Կապ.

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ՀԱՅԿԱՇԵՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Հայկաշեն համայնք
ՀՀ, Արմավիրի մարզ, գ.Հայկաշեն, (077) 863222, haykashen.armavir@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

23 նոյեմբերի 2016թվականի N 38

ՕՐԱԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 12-րդ հոդվածի 5-րդ մասով՝

ԱՎԱԳԱՆԻՆ ՈՐՈՇՈՒՄ Է

1. Հաստատել Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Հայկաշեն համայանքի ավագանու 2016 թվականի նոյեմբերի 23-ի N 9 արտահերթ նիստի օրակարգը՝ համաձայն հավելվածի:

2. Սույն որշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

Կողմ -5 Դեմ -0 Ձեռնպահ -0

1. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ ԱՐՄԵՆ
2. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ ԶԱՎԵՆ
3. ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ ԳԱՌՆԻԿ
4. ՂԱԶԱՐՅԱՆ ՇԱՀԵՆ
5. ՍԵՐՈԲՅԱՆ ԱՆԴՐԻԱՍ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՎԱՐՇԱՄ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ

Հավելված

Հայաստանի Հանրապետության Արմավիրի
մարզի Հայկաշենի համայնքի
ավագանու 23.11.2016թ. N- 38 որոշման

ՕՐԱԿԱՐԳ

1. Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Հայկաշեն համայնքի ավագանու 2016 թվականի նոյեմբերի 23-ի թիվ 9 արտահերթ նիստի օրակարգը հաստատելու մասին:

զեկուցող՝ Վ. Հովհաննիսյան

2. Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Հայկաշեն համայնքի ղեկավարի վարձատրության չափը հաստատելու մասին:

զեկուցող՝ Վ. Հովհաննիսյան

3. Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Հայկաշեն համայնքի համայնքապետարանի աշխատակազմի աշխատակիցների թվաքանակը, հաստիքացուցակը և պաշտոնական դրույքաչափերը հաստատելու մասին:

զեկուցող՝ Վ. Հովհաննիսյան

4. Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Հայկաշեն համայնքի վարչական տարածքում 2017 թվականի համար տեղական տուրքերի և վճարների դրույքաչափերը սահմանելու մասին:

զեկուցող՝ Վ. Հովհաննիսյան

5.Գույքագրման փաստաթղթերը հաստատելու մասին:

զեկուցող՝ Վ. Հովհաննիսյան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ՀԱՅԿԱՇԵՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Հայկաշեն համայնք
ՀՀ, Արմավիրի մարզ, գ.Հայկաշեն, (077) 863222, haykashen.armavir@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

23 նոյեմբերի 2016թվականի N 39

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ ՎԱՐՁԱՏՐՈՒԹՅԱՆ ՉԱՓԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածի առաջին մասի 8-րդ կետով

ԱՎԱԳԱՆԻՆ ՈՐՈՇՈՒՄ Է

1. Հաստատել Հայստանի Հանրապետության Արմավիրի մարզի Հայկաշեն համայնքի ղեկավարի վարձատրության չափը՝ ամսական 160.0 հազար ՀՀ դրամ:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

Կողմ -5 Դեմ -0 Ձեռնպահ -0

1. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ ԱՐՄԵՆ
2. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ ԶԱՎԵՆ
3. ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ ԳԱՌՆԻԿ
4. ՂԱԶԱՐՅԱՆ ՇԱՀԵՆ
5. ՍԵՐՈԲՅԱՆ ԱՆԴՐԻԱՍ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ **ՎԱՐՇԱՄ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ**

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ՀԱՅԿԱՇԵՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Հայկաշեն համայնք
ՀՀ, Արմավիրի մարզ, գ.Հայկաշեն, (077) 863222, haykashen.armavir@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

23 նոյեմբերի 2016թվականի N 40

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ՀԱՅԿԱՇԵՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ԱՇԽԱՏԱԿԻՑՆԵՐԻ ԹՎԱՔԱՆԱԿԸ,ՀԱՍՏԻՔԱՑՈՒՑԱԿԸ ԵՎ ՊԱՇՏՈՆԱԿԱՆ ԴՐՈՒՅՔԱՉԱՓԵՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածի առաջին մասի 26-րդ կետով,<<Իրավական ակտերի մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 72-րդ հոդվածի առաջին մասի 1-ին կետի <<բ>> ենթակետով և հիմք ընդունելով համայնքի ղեկավարի առաջարկությունը

ԱՎԱԳԱՆԻՆ ՈՐՈՇՈՒՄ Է

1. Հաստատել Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Հայկաշեն համայքնի համայնքապետարանի աշխատակազմի աշխատակիցների թվաքանակը,հաստիքացուցակը և պաշտոնական դրույքաչափերը՝ համաձայն հավելվածի:
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

Կողմ -5 Դեմ -0 Ձեռնպահ -0

1. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ ԱՐՄԵՆ
2. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ ԶԱՎԵՆ
3. ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ ԳԱՌՆԻԿ
4. ՂԱԶԱՐՅԱՆ ՇԱՀԵՆ
5. ՍԵՐՈԲՅԱՆ ԱՆԴՐԻԱՍ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՎԱՐՇԱՄ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ

ՀԱՎԵԼՎԱԾ
ՀԱՅԱՍՏԱՆԻՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ՀԱՅԿԱՇԵՆ
ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2016 ԹՎԱԿԱՆԻ
ՆՈՅԵՄԲԵՐԻ 23-ի N 40 ՈՐՈՇՄԱՆ

ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ՀԱՅԿԱՇԵՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ԱՇԽԱՏԱԿԻՑՆԵՐԻ ԹՎԱՔԱՆԱԿԸ, ՀԱՍՏԻՔԱՑՈՒՑԱԿԸ ԵՎ ՊԱՇՏՈՆԱՅԻՆ ԴՐՈՒՅՔԱՉԱՓԵՐԸ

1. Աշխատակիցների թվաքանակը՝ 9

2. Աշխատակազմի հաստիքացուցակը և պաշտոնային դրույքաչափերը՝

հ/հ	ՀԱՍՏԻՔԻ ԱՆՎԱՆՈՒՄԸ	Հաստիքային միավորը	Պաշտոնային դրույքաչափ
1	Համայնքի ղեկավար	1	160000
	ԱՇԽԱՏԱԿԱԶՄ		
1	Աշխատակազմի քարտուղար	1	140000
2	Առաջատար մասնագետ	2	110000
3	Առաջին կարգի մասնագետ	1	80000
	ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ՍՊԱՍԱՐԿՄԱՆ ԱՆՁՆԱԿԱԶՄ		
1	Գործավար օպերատոր	1	80000
2	Քարտուղարուհի	1	75000
3	Հավաքարար	1	75000
	ԸՆԴԱՄԵՆԸ		830000
	ՄՇԱԿՈՒՅԹԻ ԲԱԺԻՆ		
1	Գրադարանի վարիչ	1	80000
	ԸՆԴԱՄԵՆԸ		80000
	ԸՆԴԱՄԵՆԸ		910000

Աշխատակազմի քարտուղար Գ. Եղշատյան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ՀԱՅԿԱՇԵՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Հայկաշեն համայնք
ՀՀ, Արմավիրի մարզ, գ.Հայկաշեն, (077) 863222, haykashen.armavir@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

23 նոյեմբերի 2016թվականի N 41

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ՀԱՅԿԱՇԵՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՎԱՐՉԱԿԱՆ ՏԱՐԱԾՔՈՒՄ 2017 ԹՎԱԿԱՆԻ ՀԱՄԱՐ ՏԵՂԱԿԱՆ ՏՈՒՐՔԵՐԻ ԵՎ ՎՃԱՐՆԵՐԻ ԴՐՈՒՅՔԱՉԱՓԵՐԸ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածի առաջին մասի 18-րդ կետով, <<Տեղական տուրքերի և վճարների մասին >> Հայաստանի Հանրապետության օրենքի 8-րդ, 9-րդ և 10-րդ հոդվածներով և <<Իրավական ակտերի մասին >> Հայաստանի Հանրապետության օրենքի 56-րդ հոդվածի երկրորդ մասով

ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻՆ ՈՐՈՇՈՒՄ Է

1. Սահմանել Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Հայկաշեն համայնքի վարչական տարածքում 2017 թվականի համար տեղական տուրքերի և վճարների դրույքաչափերը՝ համաձայն հավելվածի:
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը:

Կողմ -5 Դեմ -0 Ձեռնպահ -0

1. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ ԱՐՄԵՆ
2. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ ԶԱՎԵՆ
3. ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ ԳԱՌՆԻԿ.
4. ՂԱԶԱՐՅԱՆ ՇԱՀԵՆ
5. ՍԵՐՈԲՅԱՆ ԱՆԴՐԻԱՍ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՎԱՐՇԱՄ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ

Հավելված

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի
Հայկաշեն համայնքի ավագանու 2016 թվականի
նոյեմբերի 23-ի N 41-Ն որոշման

ԴՐՈՒՅՔԱՉԱՓԵՐ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ՀԱՅԿԱՇԵՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՎԱՐՉԱԿԱՆ ՏԱՐԱԾՔՈՒՄ 2016 ԹՎԱԿԱՆԻ ՀԱՄԱՐ ՏԵՂԱԿԱՆ ՏՈՒՐՔԵՐԻ ԵՎ ՎՃԱՐՆԵՐԻ

1. Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով հաստատված ճարտարապետաշինարարական նախագծին համապատասխան նոր շենքերի , շինությունների /ներառյալ ոչ հիմնական / շինարարության /տեղադրման/ թույլտվության համար տեղական տուրքը սահմանվում է ՝

հիմնական օբյեկտների համար

1) մինչև 300 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող անհատական բնակելի , այդ թվում ՝ այգեգործական /ամառանոցային/ տների , ինչպես նաև մինչև 200 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հասարակական և արտադրական նշանակության օբյեկտների համար ՝ 10.000 դրամ .

2) սույն կետի 1-ին ենթակետով չնախատեսված օբյեկտների համար ՝

ա. 201-ից մինչև 500 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող օբյեկտների համար ՝ 15.000 դրամ:

բ. 501-ից մինչև 1000 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող օբյեկտների համար՝ 40.000 դրամ:

գ. 1001-ից մինչև 3000 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող օբյեկտների համար՝ 50.000 դրամ:

դ. 3001 և ավելի քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող օբյեկտների համար՝ 50.000 դրամ:

ոչ հիմնական շինությունների տեղադրման համար՝

3) մինչև 20 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող օբյեկտների համար՝ 2.000 դրամ,

4) 20 և ավելի քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող օբյեկտների համար՝ 4.000 դրամ,

2. Համայնքի վարչական տարածքում շենքերի , շինությունների , քաղաքաշինական այլ օբյեկտների վերակառուցման , ուժեղացման , վերականգնման , արդիականացման , աշխատանքների / բացառությամբ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված ՝ շինարարության թույլտվություն չպահանջող դեպքերի/ համար , եթե սահմանված կարգով հաստատված ճարտարապետաշինարարական նախագծով ՝

1) չի նախատեսվում կցակառույցների , վերակառույցների , շենքի գաբարիտային չափերն ընդլայնող այլ կառույցների / այդ թվում՝ ստորգետնյա / հետևանքով օբյեկտի ընդհանուր մակերեսի ավելացում կամ սենքերի գործառական նշանակության փոփոխություն՝ 3.000 դրամ.

2) բացի օբյեկտի վերակառուցման, ուժեղացման , վերականգնման կամ արդիականացման աշխատանքներից , նախատեսվում է նաև կցակառույցների , վերնակառույցների , շենքի գաբարիտային չափերն ընդլայնող այլ կառույցների / այդ թվում ՝ ստոգետնյա/ հետևանքով օբյեկտի ընդհանուր մակերեսի ավելացում կամ սենքերի գործառական նշանակության փոփոխություն , ապա, բացի սույն կետի «ա» ենթակետով սահմանված դրույքաչափի , կիրառվում են նաև նոր շինարարության համար սույն հոդվածի 1-ին կետով սահմանված նորմերը ՝ օբյեկտի ընդհանուր մակերեսի ավելցման կամ սենքերի գործոնական նշանակության փոփոխության մասով.

3) նախատեսվում է միայն կցակառույցների , վերնակառույցների , շենքի գաբարիտային չափերն ընդլայնող այլ կառույցների / այդ թվում ՝ ստորգետնյա/ շինարարություն կամ սենքերի գործառնական նշանակության փոփոխություն , ապա, սույն օրենքի իմաստով այն համարվում է նոր շինարարություն , որի նկատմամբ կիրառվում են նոր շինարարության համար սույն հոդվածի 1-ին կետով սահմանված նորմերը :

թույլտվության համար տեղական տուրքը սահմանվում է 3000 դրամ :

4. Համայնքի տարածքում տեղական տուրքը սահմանվում է՝

1) ոգելից և ալկահոլային խմիչքների վաճառքի թույլտվության համար՝ հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ յուրաքանչյուր եռամսյակի համար՝ 5.000 դրամ .

2) ծխախոտի արտադրանքի վաճառքի թույլտվության համար՝ հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ յուրաքանչյուր եռամսյակի համար՝ 5.000 դրամ :

5. Համայնքի տարածքում՝

1) բացօթյա առևտուր կազմակերպելու թույլտվության համար տեղեկան տուրքը սահմանվում է յուրաքանչյուր օրվա համար՝ 350 դրամ .

2) հեղուկ վառելիքի , տեխնիկական հեղուկների , հեղուկացված գազերի մանրածախ առևտրի կետերում հեղուկ վառելիքի , տեխնիկական հեղուկների, հեղուկացված գազերի վաճառքի թույլտվության համար տեղական տուրքը սահմանվում է 150.000 դրամ :

6 . Համայնքի տարածքում թանկարժեք մետաղներից պատրաստված իրերի մանրածախ առ ու վաճառքի թույլտվության համար տեղական տուրքը սահմանվում է ընթացիկ տարվա համար 50.000 դրամ :

7. Համայնքի տարածքում՝ առևտրի, հանրային սննդի , զվարճանքի , շահումով խաղերի և վիճակախաղերի կազմակերպման օբյեկտները , բաղնիքները / սաունաները / խաղատները ժամը 24:00-ից հետո աշխատելու թույլտվության համար՝ տեղական տուրքը ընթացիկ տարվա համար սահմանվում է՝

1) առևտրի օբյեկտների համար՝35.000 դրամ .

2) հանրային սննդի և զվարճանքի օբյեկտների համար՝ 80.000 դրամ.

3) բաղնիքների / սաունաների / համար՝ 300.000 դրամ .

4) խաղատների կազմակերպման համար՝ 600.000 դրամ .

5) շահումով խաղերի կազմակերպման համար՝ 400.000 դրամ .

6) վիճակախաղերի կազմակերպման համար՝ 130.000 դրամ :

8. Համայնքի տարածքում յուրաքանչյուր ամսվա համար արտաքին գովազդ տեղադրելու թույլտվության համար մեկ քառակուսի մետրի տեղական տուրքը սահմանվում է .

1) ալկոհոլային սպիրտի պարունակությունը մինչև 20 ծավալային տոկոս արտադրանք գովազդող արտաքին գովազդի համար՝1.000 դրամ.

2) թունդ ալկոհոլային / սպիրտի պարունակությունը 20 և ավելի ծավալային տոկոս / արտադրանք գովազդող արտաքին գովազդի համար՝2.500 դրամ.

3) այլ արտաքին գովազդի համար՝ 1.000 դրամ .

4) դատարկ գովազդային վահանակների համար՝ 700 դրամ :

9. Համայքնի արխիվից փաստաթղթերի պատճեններ և կրկնօրինակներ տրամադրելու համար տեղական տուրքը ընթացիկ տարվա համար սահմանվում է 3.000 դրամ :

10. Համայնքի տարածքում մարդատար տաքսու / բացառությամբ երթուղային տաքսիների / ծառայություն իրականացնելու թույլտվության համար տեղական տուրքը ընթցիկ տարվա համար սահմանվում է 5.000 դրամ :

11.Համայնքի կողմից աղբահանությունը կազմակերպելու համար աղբահանության վճարը հաշվառված և փաստացի բնակվող յուրաքանչյուր բնակչի համար սահմանվում է ամսական վճար 50 ՀՀ դրամ:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ՀԱՅԿԱՇԵՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Հայկաշեն համայնք
ՀՀ, Արմավիրի մարզ, գ.Հայկաշեն, (077) 863222, haykashen.armavir@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

23 նոյեմբերի 2016թվականի N 42

ԳՈՒՅՔԱԳՐՄԱՆ ՓԱՍՏԱԹՂԹԵՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածի առաջին մասի 29-րդ կետով և հիմք ընդունելով համայնքի գույքագրման հանձնաժողովի 2015 թվականի դեկտեմբերի 10-ից 14-ը իրականացրած գույքագրման ակտը՝

ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻՆ ՈՐՈՇՈՒՄ Է

1. Հաստատել Արմավիրի մարզի Հայկաշեն գյուղական համայնքում 2016 թվականի նոյեմբերի 15-ից 18-ը գույքագրման հանձնաժողովի կողմից իրականացրած համանքի սեփականություն համարվող գուքի գույքագրման փաստաթղթերը:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

Կողմ -5 Դեմ -0 Ձեռնպահ -0

1. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ ԱՐՄԵՆ
2. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ ԶԱՎԵՆ
3. ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ ԳԱՌՆԻԿ
4. ՂԱԶԱՐՅԱՆ ՇԱՀԵՆ
5. ՍԵՐՈԲՅԱՆ ԱՆԴՐԻԱՍ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՎԱՐՇԱՄ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ

ԱԿՏ

Գ. Հայկաշեն «18» նոյեմբերի 2016թ.

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Հայկաշենի գյուղական համայնքի ղեկավարի 2012 թվականի նոյեմբերի 7-ի թիվ 16 կարգադրությամբ ստեղծված հանձնաժողովի կազմով, հանձնաժողովի նախագահ՝ Գրիշա Եղշատյանի, անդամներ՝ Գայանե Մարտիրոսյանի, Լիա Հարությունյանի, մասնակցությամբ ավագանու անդամներ՝ Զ. Հարությունյանի և Գ. Հովհաննիսյանի, կազմեցին համապատասխան ակտը գյուղապետարանի հաշվեկշռում առկա, համայնքի սեփականություն համարվող գույքի վերաբերյալ:

ԳՅՈՒՂԱՊԵՏԱՐԱՆ

Հ.Հ	գույքի անվանումը	քանակը	գինը հազ.դրամ	ընդամենը հազ.դրամ	ծանոթություն
1	մշակույթի տուն	1		16576.0	վթարային
2	դպրոց	1		451096.82	
3	մանկապարտեզ	1		20000.0	կառուցման ընթացքում է
4	հուշարձան	1		152.6	
5	արտեզյան հորեր	11	1313.0	14450.0	
6	ավտոմեքենա ՎԱԶ 2121-նիվա	1		600.0	
7	համակարգիչ	1		364.0	
8	գրասեղան	5		45.0	
9	պահարան	4		60.0	
10	չհրկիզվող պահարան	1		20.0	
11	աթոռ կիսափափուկ	6	.4.0	24.0	
12	համակարգիչ	1	638.00 EUR	638.00 EUR	
13	համակարգիչ	1	528.00 EUR	528.00 EUR	
14	էկրան DEL	2	64.0 EUR	128.00 EUR	
15	UPS	2	42.25 EUR	84.50 EUR	
16	տպող սարք	1	234.80 EUR	234.80 EUR	
17	ժատկերամուտ	1	76.68 EUR	76.68 EUR	
18	ցանցան կոնցենտրատոր	1	29.84 EUR	29.84 EUR	
19	համակարգիչ.կոմուն. մալուխ	50 մ	7700 դրամ	7700 դրամ	
20	երկարացման հաղորդալար	2	3700 դրամ	7400 դրամ	
21	միացուցիչներ	10 h	900 դրամ	900 դրամ	
22	ամրակ	1	400 դրամ	400 դրամ	

23	մալուխ	1	400 դրամ	400 դրամ	

ԳՐԱԴԱՐԱՆ

Հ.Հ	գույքի անվանումը	քանակը	գինը հազ.դրամ	ընդամենը հազ.դրամ	ծանոթություն
1	գրքային ֆոնդ	5388			
2	պահարան	2	15.0	30.0	
3	ցուցափեղկ	1		2.0	
4	կատալոգի արկղ	1		3.0	
5	գրասեղան	1		7.0	
6	աթոռներ փափուկ	2	6.0	12.0	
7	երկաթյա գրադարակներ	24	3.0	72.0	

Հանձնաժողովի նախագահ՝ Գ. Եղշատյան

անդամներ՝ Գ. Մարտիրոսյան

Լ. Հարությունյան

Լ. Հարությունյան

Ավագանու անդամներ՝ Զ. Հարությունյան

Գ. Հովհաննիսյան

Հաստատում եմ՝

Համայնքի ղեկավար Վ. Հովհաննիսյան